ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԹԱՐՍԻՍ (վայր)
SPECIAL TOPIC: TARSHISH (place)

1. Բառն ինքնին ունի անհայտ նշանակություն: Եղել են երկու հիմնական ենթադրություններ:
   ա. Աքքադերենից «հալոցի» համար (բառացի՝ «տաքացնել», տես՝ Օլբրայթ /Albright/)
   բ. հունարենից «թիակի» համար (Հավանի որդին կապված էր ծովային ազգերի՝ կիտացիների և դոդացիների հետ)

2. Բառն ինքնին կարող է նկատի ունենալ՝
   ա. անձ (այսինքն՝ Հավանի չորս որդիներից մեկը, տես՝ Ծննդ. 10:4)
   բ. զարդ (այսինքն՝ Քահանայապետի լանջապանակի վրա ընդելուզված քարերից մեկը, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԼԱՆՋԱՊԱՆԱԿԸ</u>, տես՝ Ելից 28:20, 39:13, Եզեկ. 28:13)
   գ. նավի տեսակ (հավանաբար՝ 3 Թագ. 9:26-27, Եսայի 2:16, 60:9)
   դ. բեռի տեսակ (հավանաբար՝ 3 Թագ. 10:22, 1 Մնաց. 9:21)
   ե. վայր (տես ստորև տրված գրառումը, 2 Մնաց. 20:36-37)

3. Այս վայրի անունը (BDB 1076 II, KB 1779 I) կարող է վերաբերել
   ա. հարավային Իսպանիայում՝ Ատլանտյանի ափին գտնվող մի քաղաքի, որը Փյունիկյան գաղութ էր (այսինքն՝ Թարսիսը, Ես. 23:6, հավանաբար մերօրյա Սեվիլիան): Հերոդոտոսը նույնպես նշում է սա իր 1. 163, 4:152-ում:
   բ. Սարդինիայի մի կղզի (այսինքն՝ արձանագրություն կա Ք. Ա. 9-րդ դարի, որտեղ նշվում է «Թարսիս» անունով մի քաղաք. տես՝ Օլբրայթ 1961. 346-347):
   գ. հյուսիսային Աֆրիկայի ափին գտնվող մի քաղաք (Կարթագենը Փյունիկեի գաղութներից էր. LXX Եզեկ. 27:12-ից):
   դ. հեռու մի տարածքում գտնվող նավահանգստի նկարագրություն (հավանաբար կապված Էսրոն-Գաբեր կամ Կարմիր Ծովի հետ, KB 1797, տես՝ Սաղմ. 72:10, Եզեկ. 38:13):
   ե. մի տեսակ ծովագնաց առևտրային մեծ նավ (տես՝ 3 Թագ. 10:22, 22:48, Ես. 23:1,14):

Հովնանի գիրքը արձանագրում է, որ այն գտնվում է Իսրայելի արևմտյան մասում (տես՝ Հովնան 1:3, 4:2), սակայն ինչքան հեռու է՝ չի ասվում: Ենթատեքստով սակայն այս քաղաքն այնքան հեռու էր, որ Հովնանը կարծում էր Իսրայելի Աստծուց կարող էր հեռանալ: